եկեղեցին միաբնակութեան էր վերադարձրել Հայոց կաթողիկոս Կոմիտաս Աղցեցին (615-628)[1], ով եւս «Պարսից ժողովի» մասնակիցներից էր՝ դեռ եպիսկոպոսի կարգավիճակով: Նշուած տեղեկութիւնները համադրելով՝ հաւանական է թւում մտածել, որ այսրկովկասեան երկրների որոշակի ինքնավարութիւնը խորհրդանշող ոչ միայն Աղուանից, այլեւ Հայոց եւ Վրաց «իշխան»-ների հաստատութիւնները (ինստիտուտները) հիմնադրուել են (անկախ նախորդող դարաշրջանի նմանատիպ, բայց աւելի թոյլ հաստատութիւններից) հէնց «Պարսից ժողովում» կամ նրա համատեքստում: Իսկ այդ դէպքում պէտք է հասկանալի լինի, որ նշուած ինքնավարական հաստատութիւնները ենթադրում էին ոչ միայն Սասանեան կենտրոնական մարմինների կողմից Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխան»-ների իրաւասութիւնների յստակ սահմանում, այլեւ այն վարչատարածքների ճշգրիտ առանձնացում, որտեղ այդ իրաւասութիւնները պիտի գործառուէին:

Եւ ահա տեսնում ենք, որ մեր «Աշխարհացոյց»-ը հէնց փորձում է սահմանել տուեալ տարածքները, ընդ որում՝ բաւականաչափ յստակ. ընդ սմին՝ Հայք աշխարհ-շահրի դէպքում է դարի հայ աշխարհագէտը դա անում է 385/387 եւ 591 թթ. բաժանագծերի բացարձակ անտեսումով (թէպէտեւ երկի բնագիրը բազմազան ու կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում այդ բաժանագծերի մասին): Ուշադրութիւն դարձնենք, որ «Աշխարհացոյց»-ում յատուկ նշւում են նաեւ, նորօրեայ եզրոյթով ասած՝ «վիճելի» հատուածները («որ ի Հայոց հանեալ են» կամ «ի Հայոց առեալ են» բառերով)՝ Գուգարք նահանգի գաւառները՝ Վիրք-Վարջան աշխարհ-շահրի դէպքում, Արցախի եւ Ուտիքի գաւառները՝ Աղուանքի դէպքում, եւ Կասպք-Փայտակարան նահանգը՝ Ատրպատական աշխարհ-շահրի դէպքում:

Փակագծում նկատենք, որ «Պարսից ժողովի» հայկական պատուիրակութեան հէնց այս տարածքային «յաւակնութիւնները», ի տարբերութիւն խմբի մնացեալ նպատակադրումների, մնացին Տիզբոնի կենտրոնական իշխանութեան կողմից «չբաւարարուած»: Այդպէս՝ «Հայոց իշխան»-ը, որի լիազօրութիւնների ճանաչումը շուտով որդեգրուեց Բիւզանդիայի, ապա նաեւ Արաբական խալիփայութեան կողմից, իրաւասութիւններ չստացաւ Գուգարք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգների նկատմամբ, եւ դա շարունակուեց ընդհուպ մինչեւ Աբբասեանների կողմից «Արմինիայի» իշխանաց իշխանի հաստատութեան սահմանումը Թ դարի առաջին կէսում, որն, ի դէպ, բաւականին արագ վերաճեց թագաւորական իշխանութեան. ընդ սմին Բագրատունի թագաւորները, ովքեր շատ արագ զիջեցին իրենց գերիշխանութիւնը «Արմինիայի» մաս կազմող բուն Վիրքի եւ Բուն Աղուանքի նկատմամբ (պաշտօնական արձանագրումը տե՛ս գոնէ Կոստանդին Ծիրանածին կայսեր մօտ), ամենեւին բաց չթողեցին ստեղծուած պատեհութիւնը՝ վերը նշուած ծայրամասային նահանգները միասնական հայկական պետութեան կազմում «վերամիաւորելու» հարցում (որն, ըստ Կ. Իւզբաշեանի դիպուկ դիտարկման, ոչ պատահականօրէն էր վերստին ստացել «Մեծ Հայք» պաշտօնական անուանումը[2]):

«Աշխարհացոյց»-ի ստեղծումը 610-ական թթ. երկրորդ կէսին վերագրելով (թերեւս՝ մինչեւ 618 թ., երբ կառուցուեց Վաղարշապատի Ս. Հռիփսիմէի եկեղեցին, որի փոխարէն երկը դեռեւս նշում է «մարտիրոսուհու մատուռ»), գոնէ իբրեւ վարկած՝ հնարաւոր է առաջ քաշել պատմական երկու հետաքրքրական իրողութեան վերա-

1 *Տեառն* **Անանիայի** *Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից...*, – «Արարատ», 1897, էջ 137; **Լ. Մէլիքսեթ-Բէկ**, *Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, հտ. Ա (Ե-ԺԲ դար), Եր., 1934, էջ 37-38:

2 Տե՛ս **К. Н. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, էջ 81: